600.0229.26.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2019 թվականի №229Ա
քաղ. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի վերաբերյալ 2018 թվականի 4-րդ եռամսյակի տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) մոնիթորինգի արդյունքները.

բ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝Կանոններ) 16-րդ և 19-րդ կետերով սահմանված ժամկետների խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով 2019 թվականի ապրիլի 5-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը, որի ժամկետը 2 անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում, փոխօգնության կարգով, Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե հասցեագրված Հանձնաժողովի սույն թվականի մայիսի 23-ի ԳԲ/3.2-54/893-19 գրությունը, որի հիման վրա վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

դ) Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի սույն թվականի հունիսի 19-ի №01/08/2763-19 գրությունը, համաձայն որի՝ տեղեկատվության մեջ ներառված 159 դիմումներից 17-ում նշված հասցեներում ջրաչափական հանգույցները կառուցվել են ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից ներկայումս

համակարգվող «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի» շրջանակում՝2017-2018 թվականներին, իսկ մյուս 142 հասցեներում նշված համայնքներում՝ 2008-2016 թվականների ընթացքում «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ- ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից տարբեր վարկային ծրագրերով իրականացվել են ներդրումներ, սակայն անհատական միացումների հասցեական տեղեկատվություն ընկերությունների արխիվներում չկան,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 26-ի №ԳԳ/8681 գրությամբ ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց 2018 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Կանոնների 16-րդ կետով սահմանված ժամկետի խախտման պատճառ են հանդիսացել նոր համակարգերի կառուցման աշխատանքները երրորդ կողմի ֆինանսավորմամբ ներդրումային ծրագրերի շրջանակում իրականացումը, որի ընթացքում տրամադրվել են միայն միացման սխեմաներ և նշվել կապալառու կազմակերպությունների կողմից աշխատանքների իրականացման ժամկետները, իսկ Կանոնների 19-րդ կետով սահմանված ժամկետների խախտման պատճառ են հանդիսացել դիմող անձանց կողմից իրենց դիմումներից հրաժարվելը կամ վերջիններիս հետ սահմանվել են ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման փոխհամաձայնեցված այլ ժամկետներ,

զ) Կանոնների 16-րդ կետը, համաձայն որի՝ դիմումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը դիմող անձին է ներկայացնում տեխնիկական պայմաններ՝ դիմող անձի կողմից նոր համակարգի կառուցման դեպքում, կամ միակողմանի կնքված միացման պայմանագիր՝ Ընկերության կողմից նոր համակարգի կառուցման դեպքում,

է) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը 2018 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում 159 դեպքում խախտել է Կանոնների 16-րդ կետը՝ դիմող անձանց միացման պայմանագիր կամ տեխնիկական պայման ներկայացնելու փոխարեն միացման սխեմաներ տրամադրելով: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, որ նոր համակարգերի կառուցման աշխատանքները իրականացվել են երրորդ կողմի ֆինանսավորմամբ ներդրումային ծրագրերի շրջանակում և այդ պատճառով տրամադրվել են միայն միացման

սխեմաներ և նշվել կապալառու կազմակերպությունների կողմից աշխատանքների իրականացման ժամկետները, հարկ է փաստել, որ Ընկերությունը գործող ընդհանուր իրավակարգավորումներից տարբերվող հիմքերի (իրավիճակների) առաջացման առանձնահատուկ դեպքերում, համապատասխան հիմնավորումների առկայության պարագայում, պարտավոր էր դիմել Հանձնաժողով՝ Կանոններով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից անհատական որոշում կայացնելու խնդրանքով, սակայն չի դիմել: Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Կանոնների 19-րդ կետի խախտում չի հայտնաբերվել,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել՝ Կանոնների 16-րդ կետը խախտելու համար:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
26 հունիսի 2019թ.